

## Հ Ա Ն Դ Է Ս Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Գ Ա Ն Տ Ի Ա Ք Ա Ղ Ա Ք Ն Ո Ի Կ Ղ Ջ Ի Ն

Գանտիա կղզին՝ որ հնոյն Յունա-ստանի պատմութեան մէջ Կրետէ անուամբ կը ճանչցուէր, Միջերկրականի մեծագոյն կղզիներէն մէկն է, բարձրացեալ 'ի մուտս Արշիպեղազոս ծովուն . որուն երկայնութիւնը յարեելից յարեմուտս 140 մղոնի չափ է, իսկ լայնութիւնը շատ անհաւասար : Լեռանց անընդհատ շարք մը կ'ընդմիջեն զկղզին ընդ երկայնութիւն, որոց 'ի միջավայրն կ'ընկնայ իդա լեռը, բարձր քան զամենայն գագաթունսն, որ ունի 2338 կանգուն բարձրութիւն : Կը համարին ոմանք որ կղզւոյն այժմեան Գանտիա անունը յառաջ եկած ըլլայ լեռանց սպիտակ երևութէն՝ հայելով 'ի ծովակողմանէ . բայց այլք հաւանագոյն ևս կարծեօք կ'ըսեն թէ 'ի Սարակինոսաց ծագումն առած է այդ անունը, որովք քաղաք մը շինելով ու Գանտիա անուանելով, կղզին ալ նոյն անուամբ կոչուեր է :


Գանտիա կամ հինն Կրետէ՝ հուշակաւոր եղած է պատմական ու դիցաբանական դէպքերով, և որուն պատմութիւնը կը սկսի 'ի դիւցազնական կամ յառասպելական ժամանակաց : Հօս էր իդա լեռը՝ խանձարուրք Արամաղայ : Հօս թագաւորեց Մինոսի յա-

ռաջ քան զպատերազմն տրոյական, և կը տիրէր կղզւոյն մեծագոյն մասին : Սա օրէնսդիր եղաւ նոյն կղզւոյն, որուն օրինաց իմաստութեան վրայ զարմացաւ Լիկուրգոս և յարգեց բոլոր Յունաստան : Մինոս, Աթենացի արհեստաւորին Տետաղեայ առաջնորդութեամբ համանուն համբաւաւոր բաւիղը շինեց . և ինքն եղաւ առաջին, ըստ արւանդութեան, որ նաւատորմի մը կազմելով, մաքրեց յոնիական ծովը 'ի հինից . հալածեց զկարիացիս 'ի Կիւկլադայց, և հաստատեց հօն իր որդիքը : Կրետէ կղզին հին ատեն որպէս արանդեն պատմութիւնք, հարիւր քաղաք ունէր, յորոց միջի կը փայլէին առաւելապէս Գորտինա, Կնոսոս, Կիդոնիա, Մինոս, և այլք . անոր համար կոչեցաւ և կղզին ուրիշ անուամբ Էքադոպոլիս (Հարիւրքաղաքեան) :


Յամին 67 յառաջ քան զթուական փրկչին, տիրեցին Կրետէի Հուվմայեցիք, և եղաւ հուվմէական զաւառ : Մնաց ասոնց և ապա բիւզանդական իշխանութեան տակ, մինչև ցամն 823, յորում առին Սարակինոսք, և Գանտիա անուամբ քաղաք մը շինելով բոլոր կղզին նոյն անուամբ կոչեցին : Տասնեորորդ դարուն մէջ տիրեցին դարձեալ

Արևելեան կայսերք, ապա Մոնֆերրա, դոյր դրսին անցաւ, և անկէ ալ վենետ, կեցւոց՝ երեքտասաներորդ դարուն մէջ, որոնք տիրեցին 400 տարիէ աւելի: Գանտիան վենետիկեան հասարակապետութեան զլխաւոր կալուածներէն

մէկն եղաւ յԱրևելս, և երեք հպատակ թագաւորութեանց մէջ առաջինը, որոց գրոջները կը ծածանէին Ս. Մարկոսի հրապարակին մէջ: Բայց եօթն և տասներորդ դարուն կիսուն, յետքսան և հինգ ամաց երկարաւու ու ա.



ԳԱՆՏԻԱ ԲԱՂԱԲ ՏԵՍԵԱԼ Ի ՅԱՄԱԲԷ



ԳԱՆՏԻԱ ԲԱՂԱԲ ՏԵՍԵԱԼ Ի ԾՈՎԷ

րինահնդ պատերազմաց, անցաւ վերջապէս Օսմանեան կայսերութեան յաւին 1669, որուն կը տիրէ մինչև ցայսօր: 1821ին յունական յեղափոխութեան մէջ՝ մեծ ու փառաւոր մասն ունեցաւ Գանտիա: Աղիտարեր պատերազմունք աւերեցին զկղզին, բնակիչը

կիսով չափ նուաղեցաւ, ձիթենիք՝ զլխաւոր աղբիւր իր հարստութեանը՝ ապականեցան, և երկիրն կողոպտեցաւ ու անմշակ թողուեցաւ: 1833ին Գանտիան եզրպատօի տրուեցաւ, բայց 1841ին վերադարձաւ թուրքիոյ:

Առաջիկայ կրկին պատկերքն կը ներ.

Պրուս Գ.

17

կայացնեն Գանտիա քաղաքը, մին 'ի ցամաքէ և միւսն 'ի ծովէ . շինուած է գեղեցիկս 'ի հիւսիսային ափունս, և նաւահանգիստ ունի Միջերկրականի վրայ, մերձենալի միայն փոքրիկ նաւաց : Ունի գրեթէ 15,000 բնակիչ, իսկ բոլոր կղզւոյն բնակիչն է 200,000 :

Բարեբեր է Գանտիա, և կը բերէ առատութեամբ ցորեան, գինի, իւզ, լեմն, նարինջ և ուրիշ ամեն տեսակ պտուղներ . առատ է նաև մեղրը, և շատ աւելի հոշակաւոր սապոնը : Թէպէտ երկիրն ընդհանուր լեռնոտ է, բայց ունի և իր հովիտները ու գաշտաւայրքը :

ԱՒԵՐԱԿԻ ՍՈՑԱԼԱՅ ՅԱՓՐԻԿԷ

ԵՒ ԴՐՈՆՍՎԱՄԱ

ԺՉ գարուն սկիզբները Բորգոզայիք առաջին նաւարկողք որով և տիրողք եղան Ափրիկէի հարաւային ափանց, երկու կողմին ալ արևելեան և արևմտեան . իրենց քարոզիչք և պատմիչք շատ հետաքննական տեղեկութիւններ աւանդեր էին այն անձանօթ երկիրներուն վրայ, որք քիչ ատենէն դարձեալ անայցելու մնալով յԵւրոպացւոց՝ նոյնպէս ալ անձանօթ մնացին, և տըրուած տեղեկութիւնք ալ անստոյգ և երկբայելի համարուեցան : Այսպիսի տեղեկաց և տեղեկութեանց մէկն ալ էր Սոֆալայ՝ ոսկեբեր երկրին վրայ, յաւրեւելեան ափունս, հարաւային լայնութեան 18-22 աստիճանաց միջոց, զոր համարէին Ս . Գրոց մէջ յիշեալ և Սոլոմոնի հարստութեանց աղբիւր՝ Սովփերայ կամ Սոփալայ երկիրը . ուր և կ'ըսէին քարոզիչքն, թէ Զիմպաօէ ըստած տեղ մը մեծամեծ և զարմանալի շինուածք կան՝ 'ի փունիկեցւոց կանգնեալ : Այս բանս մեծ խնդրոյ առիթ

մ'եղած էր գիտնոց . ոմանք կը հաւանէին ասոնց ըսածին, այլք ոչ, զՊովիեր կամ Սոփալ գնելով յԱրաբիա կամ 'ի Հնդկիս, ուր Սողոմոնի վաճառականաց բերած բերքերն առատութեամբ գրտնուին : Արք երեք տարի առաջ, 1871, 'ի հինգ սեպտեմբերի, Մաւի կամ Մօխ (Mauch) Գերմանացին իր խուզարկութեանց ատեն 'ի կողմանս Սոփալայ, ընդ 20° 14' հարաւային լայնութեան, գտաւ մեծագործ շինուածոց մնացորդներ 'ի Զիմպապի կոչուած տեղ մը, որ է Զիմպաօէ (կամ Նիմպաօէ) Բորգոզայաց . երկու կոյտ շինուածոց, կարծր և աղւեսած և կտրուած կոփածոց քարամբ, առանց չաղախի շարուած . մը նացեալ պատերն 3 մեղրաչափ հաստութիւն ունին վարի կողմը, 2 1/2 վերի կողմը . աշտարակ մը կայ 10 մեղրաչափ, վարի կողմը բոլորակ, դուլին կունած և ուր թուին իբրև ամրոց շինուած 'ի պաշտպանութիւն ոսկեհանից, որոց նշանքն դեռ կ'երևին : Զիմպապի առունն ալ տեղացեաց մէջ արբունիք նշանակէ : Քանդակներն խոշոր, այսինքն անարուեստ են, որով ոչ փունիկեցւոց կամ շատ կիրթ ազգի մը գործ երևի, և ոչ ալ տեղացի Սևերու . անոր համար ոմանք իբրև միջին ճամբայ Արաբացւոց գործ կը համարին զանոնք, չկարծելով որ այնքան նոր մնային եթէ 3000 տարի յառաջ կանգնուած ըլլային 'ի փունիկեցւոց և 'ի գործակցաց Սողոմոնի : Բայց դեռ քննութեան տակ են Մաւիայ գիւտք : Իսկ ինքն Գերմանացի գտողն շատ տարիներէ վեր Չամպէզի գետոյն և Գրանսվալ ըստած հասարակապետութեան միջոցի երկիրները կը քննէ, շատ և նոր լոյս տալով այն անձանօթ մնացեալ կողմանց . և մեծ հետաքրքրութեամբ կը սպասուի իր բազմամեայ հաւաքեալ ծանօթութեանց հրատարակմանը :

Յիշեալ Գրանսվալն նոր հաստատուած հասարակապետութիւն մ'է Եւրոպայի վաճառական դաղթականաց, իբրև 25 կամ 30,000 անձանց, և իբր 250,000 տեղացեաց, որոց ցեղն